ՀՏԴ 81՝37
Լեզվաբանություն

Շուշան ՆԵՐՍԵՍՅԱՆ
Վանաձորի պետական համալսարան
«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտություն, մագիստրատուրա 1-րդ կուրս
Գիտ. ղեկավար՝ բ. գ. թ., դոցենտ Լ. Պետրոսյան

ՀԱՅՐ ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Սույն հոդվածում քննել ենք ազգակցական հարաբերություն ցույց տվող հայր հասկացության իմաստային ընկալումները: Անդրադարձել ենք ոչ միայն հասկացության առաջնային, այլև մի շարք երկրորդական իմաստներին, որոնք, այնուամենայնիվ, սերտորեն կապված են առաջնային իմաստի հետ և բխում են նրա բովանդակությունից: Քննելով բառարանային վերլուծությունները՝ կատարել ենք համեմատական աշխատանք՝ պարզելով, թե իմաստային ինչ փոփոխություններ են գրանցվել բառի պատմական զարգացման ընթացքում:
Աշխատանքի ավարտին եկել ենք այն եզրակացության, որ հայոց լեզվի բնիկ շերտի բառերից մեկը՝ հայրը, ժամանակի ընթացքում սկսել է գործածվել ոչ միայն անձնանիշ, այլև իրանիշ գոյականներին վերագրվելիս:
Բանալի բառեր՝ *հայր, հասկացություն, բառ, առաջնային իմաստ, երկրորդական իմաստ, ծնող:*

Ш.Нерсесян

СЕМАНТИЧЕСКИЕ РЕЦЕПЦИИ КОНЦЕПТА «ОТЕЦ» В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

В данной статье мы проанализировали семантическую рецепцию концепта «отец» в системе родственных отношений. Мы исследовали не только первичное значение концепта, но и ряд второстепенных смыслов, которые, тем не менее, тесно связаны с первичной семантикой и вытекают из ее содержания. На основе анализа словарных статей, мы провели также сравнительное исследование и выяснили, какие семантические трансформации были зафиксированы на всем протяжении исторического развития данного слова.
В конце работы мы пришли к выводу, что одна из исконных лексем армянского языка – «отец» – с течением времени стала употребляться не только с терминами, обозначающими лицо, но и с предметными существительными.

Ключевые слова: *отец, концепт, первичное значение, вторичное значение, родитель.*

Sh.Nersesyan

SEMANTIC PERCEPTION OF THE CONCEPT "FATHER "IN ARMENIAN LANGUAGE

In this article we have considered the semantic perceptions of the concept "father" that shows relationship. We have touched upon not only the word's primary meaning but also a number of secondary meanings which are closely related to the primary meaning and come from its contents. Having discussed lexicographical analyses we have done comparative analysis to find out what semantic changes have been recorded during the historical development of the word. At the end of the study we have come to the conclusion that the word "father", as one of the words of the Armenian basic layer, has been recently used not only for animate nouns, but also for inanimate nouns.

Keywords. *Fother, concept, primary meaning, secondary meaning, parent.*

Հայր հասկացույթի հիմնական իմաստն է *«Այր կամ արու ծնող զավակի» (12, 32)* : Այս բացատրությունը գրեթե նույնությամբ կրկնում են հետագա շրջանների բանասիրական բառարանների հեղինակները: Ս. Մալխասյանցը «Հայերէն բացատրական բառարանում» որպես այս բառի առաջնային իմաստ նշում է. *«արական սեռի անձ, որ որդի ունի, արու ծնող» (10, 39),* Է. Աղայանը «Արդի բացատրական բառարանում»՝ *«Տղամարդը իր որդիների համար, ծնող արական անձը»* և *«Տղամարդ, որ արդեն որդի ունի կամ ունեցել է» (1, 813)*: ***Հայր*** հասկացույթի առաջնային իմաստը գործածելի է հայերենի պատմական զարգացման բոլոր երեք շրջաններում և բարբառներում: Այն իր առաջնային իմաստով պահպանվել է հայ գրականության և ժողովրդական բանահյուսության մեջ:

Այսպես՝ ***հայր*** հասկացույթի առաջնային իմաստը գործածված է «Աստվածաշնչի» «Գիրք ծննդոց» գլխում *«Վասն այնորիկ թողցէ այր **զհայր** իւր՝ և զմայր իւր, և երթիցէ՛ զհետ կնոջ իւրոյ»* նախադասության մեջ, որտեղ առաջնային իմաստի պարզաբանման համար հիմք զուգահեռ գործածվող, ազգակցական հարաբերություն արտահայտող բառերը՝ *զմայր, կնոջ:*

Հայ հին և միջնադարյան տարբեր հեղինակների ստեղագործություններում ***հայր*** հասկացույթի առաջնային իմաստը հստակորեն տարբերակելու համար հիմք են դառնում զուգահեռ գործածվող ազգակցական հարաբերություն արտահայտող այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ *մայր, պապ, եղբայր, քույր, որդի* և այլն: Օրինակ՝ *Բարբանջեալ բարձին Զիսելքն խիկարին, Ետուն սպանանել, զիւր մօրուն, **Հօր** աչքից հանին* (8,159), *Պապուս անունն ասեն մօլլայ, Աղբօրս ասեն քաղքին շահնայ, Ու զիմ անունս ասեն Այշալ, Մէկալ քուրոջս Օղուլդայ, Զիմ մօրս անունն ասեն Ֆաթմայ, Ու **հօրս** ասեն դատի մօլլայ* (8, 320), ***Հայրն*** *չկարաց փրկել զորդին իւր սիրական, Որդին ելաց և հառաչեաց յոգւոց*

եհան (8, 343), *Ջիս այլ սիրո տէր արիր, ու հանիր իմ հօրն ի տանէն, Աղուո՛ր, քեզ բան մի կ՚ասեմ, հօրդ ահուն չեմ իշխեր ասել* և այլն:

Աշխարհաբար գրականության մեջ ***հայր*** հասկացությունը դրսևորվում է իր առաջնային իմաստի կիրառմամբ: Աշխարհաբար մի շարք հեղինակների ստեղծագործություններում, հատկապես երբ դրանք ընտանեկան հարաբերություններ են պատկերում, հանդիպում ենք այս բառի առաջնային իմաստի կիրառմանը, ինչպես՝ *-Անցածը վերադարձնել չի կարելի, **հա՛յր,** օրինի՛ր,-արտասանեց որդին մի տեսակ խուլ ձայնով (14, 292), Ու ողորմելի **հայրը** կխոստանար, ամեն բան կխոստանար, կանուխ պիտի գար ու պտտցնելու պիտի տաներ այս հեք գրկյալ որբերը (14, 78), -Կուզե՞ս ես քո քույրը լինեմ, դու իմ եղբայրը: Ես կխնդրեմ **հորս,** որ դու մեր տանն ապրես և ինձ համար միշտ այդպիսի եղանակներ նվագես (14, 147), Շմավոնը **հորը** տեսնելով՝ ավելի մռայլվեց և մեղավորի պես, կարծես ինքը լիներ աղետի պատճառը, չպատասխանեց և աչքերը գետնին գցեց (3, 4)* և այլն:

Հայ նոր գրականության հատկապես չափածո ստեղծագործություններում նույնպես հանդիպում ենք ***հայր*** հասկացության առաջնային իմաստի կիրառություններին, ինչպես՝ ***Հայրը*** *ինչպես մռայլ մի ամպ, Աղջիկն անուշ մի լուսին (5, 122), -Սա էլ **հորս** տնկածն է,- պարծենում էր քույրս քաջ, Գոհար քույրս, որ **հորս** «դոչաղ» տղեն էր* դարձել *(13, 180), Մինչ **հայրը** նրա՝ Գևոն կոշկակար, Գոգնոցը հանեց, արխալուղ հագավ (15, 4), Գեթ **հայրը** մնար…Բայց **հայրն** էլ գնաց, Երբ որդին չկար տասը տարեկան* (15, 7) և այլն: Չափածո խոսքում ***հայր*** հասկացությունը շատ հաճախ օգտագործվում է փաղաքշական՝ ***հայրիկ*** տարբերակով՝ երբեմն ունենալով **իմ** դերանունով արտահայտված հատկացուցիչ, ինչպես՝ -**Հայր՛իկ**, ինչո՞ւ ետ չդարձան էն քաջերը սիրատենչ, Մի՞թե, **հայրիկ**, ինձ մոռացան, Էլ չեն բերի հուրն անշեջ (5, 124), ***Հայրի՛կ, հայրի՛կ,*** *մի՞թե չկա էս աշխարհքում անշեջ հուր* (5, 125), *Գտնեմ դեռ կորած խաչքար մի, **հայր իմ,** Որպես շիրիմդ՝ համբուրեմ ու լամ* (13, 183), ***Հայր իմ,*** *արծիվ կուզեիր, բուերի փառքն ինձ մնաց* (13, 201), և այլն: Հ. Շիրազի ստեղծագործություններում նույնպես ***հայր*** հասկացությունը կապակցվում է այնպիսի որոշիչների, ինչպիսիք են ***խեղճ, ծերուկ, սուրբ, քաղցր, հրաշք*** և այլն, ինչպես՝ *Մանուկ աչքիս՝**հայրիկս** ծերուկ հսկա էր թվում,* (13, 184)*, Ու փշրեցին սուրբ **հորս** որպես կավե մի արձան* (13, 192), *Միայն քաղցր **հայրիկիս** նուրբ շշուկն է դեռ ինձ հետ* (13, 192), *Երբ **հայրիկիս** շնչին էր միշտ կարոտում որբ հոգիս, Հարցնում էի ծերերից՝թե տեսե՞լ եք **հորս** խեղճ* (13, 194), *Հրաշք **հայր էր,** մարդ էր, մարդ և աստվածն էր բոստանի…* (13, 209) և այլն:

Հայր հասկացությունը հայերենի բարբառներում հանդես է գալիս հետևյալ տարբերակներով ***հայր*** (Ագլ.), ***հար*** (Ախց., Ակն., Ասլ.,Կր., ՆՆխ., Պլ., Ռ., Սեբ., Սչ.), ***հէր*** (Ալշ., Գոր., Երև., Հմշ., Ղրբ. Մշ., Շմ., Տփ.), ***խէր*** (Մկ.,

Մրդ., Ջդ., Սլմ., Վն. Ոզմ.) որոնցում ակնհայտ է երկբարբառի պարզեցումը (***այ>ա, է, է***) *(2, 32)*:

Հայերենի զարգացման բոլոր փուլերում ***հայր*** հասկացույթը, պահպանելով առաջնային իմաստը, ասիճանաբար ձեռք է բերում նոր երկրորդական իմաստներ և կապակցելիական նոր հնարավորություններ: ***Հայր*** հասկացույթի իմաստաբանական քննությունը ցույց է տալիս, որ այս հասկացույթը վերագրվում է *աստվածանիշ, անձնանիշ, կենդանանիշ* և *իրանիշ* գոյականների՝ իմաստային համապատասխան հերթագայություններով:

1. Աստվածանշություն

Դավանաբանական հայեցակետով դիտարկելիս հայ իրականության մեջ առանձնացնում ենք երկու շրջան՝ *նախաքրիստոնեական* (հեթանոսական) և *քրիստոնեական*:

Հեթանոսական շրջանում հայ դիցաբանության գերագույն աստվածն Արամազդն էր, որին հաճախ անվանում են աստվածների ***հայր*** կամ ***հայր*** Արամազդ, ինչպես՝ *Հայոց աստվածների* ***հայր*** *Արամազդի գլխավոր տաճար-սրբատեղին գտնվում էր Բարձր Հայք նահանգի Դարանաղի գավառի Անի ամրոցում: Լսիր, ա՛յ Եվայի ցեղի դասական ներկայացուցիչ, ինչու՞ ես կարծում, որ դու իսկական ծնող ես, իսկ* ***հայր*** *Արամազդը՝ պահեստային:*

Քրիստոնեական շրջանից մեզ հասած գրականությունից պարզ է դառնում, որ ***հայր*** հասկացույթը, ի տարբերություն ազգակցական հարաբերություն ցույց տվող մնացած հասկացույթների, ամենահաճախադեպն է կրոնաեկեղեցական գրականության մեջ, որտեղ նրա գործածումը վերագրվում է ***Աստված*** հասկացույթին՝ *«****Հայր*** *տեառն մերոյ կամ* ***հայրն*** *ձեր երկնաւոր»* (12, 32) իմաստով, ինչպես՝ *«Զայ ասի՝ հայելով յառաջին անձն յանուն* ***հօր****, և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ: Առ* ***հայր*** *իմ (բնութեամբ), և առ* ***հայր*** *ձեր շնորհօք:* ***Հայր*** *տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և այլն: Կամ* ***Հայրն*** *ձեր երկնաւոր: Տէր* ***հայր*** *մեր:* ***Հայր*** *մեր՝ որ յերկինս»:* Ս. Մալխասյանցը այս իմաստի պարզաբանման համար բերում է *«Աստված, իբրև արարիչ ամենքի»* (10, 39) բացատրությունը: Այս իմաստի դրսևորմանը հանդիպում ենք Ե. Կողբացու *«Եղծ աղանդոցում»*, ինչպես՝ *«Եթե* ***հայրն*** *յորդւոյն արարածս ոչ խնայեաց այնու, զի ի ձեռս չարին մատնեաց, որդին զիւրսն զի՞ արդ ոչ զընդայցէ. Առ տկարութեա՞ն ինչ, թե՞ առ չարակամութեան» (7, 465)*:

2. Անձնանշություն

Կապված կրոնաեկեղեցական իրականության հետ՝ այս հասկացույթը, աստվածանիշ, վերագրվում է նաև անձնանիշ գոյականների՝ լայն ընդգրկմամբ նշանակելով՝ *«եկեղեցու* ***հայրեր,*** *հոգևոր կոչման անձեր կամ հեղինակներ, որոնց գրուածքները կամ որոշումները վայելում են հեղինակութիւն»* (10, 39):

Այս իմաստի նեղացմամբ ՆՀԲ-ն բերում է *«Աբբայ, վանական, միայնակեաց և վարդապէտ եկեղեցւոյ կամ հայրապէտ»* իմաստը: Այս իմաստով ***հայր*** հասկացությունը գործածվել է *«Վարք հարանց և բանք նոցա լուսաւորեն զանձնն»* երկի և միջնադարյան հեղինակների մի շարք երկերում: Այս իմաստով գործածվելիս հասկացությունը հիմնականում կապվում է արական սեռի որևէ անձնանիշ հատուկ գոյականի, ինչպես՝ *«Ասաց* ***հայրն*** *Անտոն»*, *«Արսենիոս* ***հայրն»*** և այլն: Այս իմաստին բնորոշ են նաև *լուսաւորե*, *ժողովել*, *ասել* գործողություն ցույց տվող բայերը և *աստվածաբան*, *սուրբ*, *բազմերջանիկ* որոշիչները, ինչպես՝ *«վարք* ***հարանցն*** *և բանք նոցա լուսաւորեն զանձնն, Ասաց* ***հայրն*** *Գրիգոր աստուածաբան, սուրբ* ***հարքն*** *ի Նիկիա ժողովեալքն, բազմերջանիկ* ***հարանցն»*** և այլն:

Սրանցից բացի, ***հայր*** հասկացությունը առհասարակ համարվում է *«հարգական մակդիր հոգևորականների»* (1, 813), մասնավորապես՝ ***Տեր հայր***-քահանային դիմելու ձև, ***Հայր սուրբ***-վարդապետին դիմելու ձև, ***Սրբազան հայր***-եպիսկոպոսին ողջունելու ձև, ***Վեհափառ հայր***-կաթողիկոսին դիմելու ձև (վերջինիս դեպքում հաճախադեպ է վեհափառ ***հայր***ապետ արտահայտությունը), ինչպես՝ *Էն վանքում հայոց ազգին պահապան Աղոթք էր անում ծերուկ* ***հայր*** *Օհան:* ***Հայր սուրբն*** *ընդունեց բանալիները, հարցնելով:* ***Հա՛յր Սուրբ****, եթե մարդը հավատացյալդ չէ, Որտեղ պիտի նա իր մեղքը խոստովանի:* ***-Սրբազան հայր****, մենք քրիստոնյա ենք,- նկատեց մի վարդապետ,- որտե՞ղ և օծենք մեր քահանայապետին, միևնույն է:* ***Հա՛յր*** *Կոմիտաս, աչքով չտամ, բավականին կազդուրվել ես, հանգստացած տեսք ունես, երևի լավ են պահել քեզ այս մի քանի ամսվա ընթացքում, խոսակցությունն սկսեց* ***վեհափառ հայրապետը*** և այլն

Հայր հասկացությունը հանդիպում է նաև *«Խնամող, կրթություն տվող անձ: Հոգևոր հայր»* իմաստով, ինչպես՝ *Հայր չունի, դու եղիր նրան հայր*: Ազգակցական հարաբերություններ ցույց տվող հասկացություններից *«խնամող»* իմաստով առանձնանում է *քույր* հասկացությունը *(գթության քույր)*:

Հայր հասկացությունը իմաստի ընդլայնմամբ գրաբարում նշանակում էր նաև «նախահայր», որ վերագրվում էր *Սամուել*, *Նախաստեղծ*, *Աբրահամ* անձնանիշ գոյականներին, ինչպես՝ *«Սամուել* ***հայր*** *Ասորւոց»*, *«Նա զնախաստեղծն* ***զհայրն*** *աշխարհի»*, *«****Հայր*** *մեր Աբրահամ է»* և այլն: Այս իմաստով գործածվելիս հասկացությունը գործածվում է նաև որպես օրէնք հասկացության հատկացուցիչ, օրինակ՝ *«Ի վերայ հարցն օրինաց»*, «Անցանել զհարցն օրինօք» և այլն:

Լինելով անձնանիշ հասկացություն՝ ***հայր***ը կիրառվում է և՛ եզակի, և՛ հոգնակի թվով՝ ի տարբերություն առաջին իմաստի, օրինակ՝ «Ով հարք սուրբք»: Է. Աղայանը, անդրադառնալով այս իմաստին, նշում է, որ այս իմաստն է ենթադրում նաև ***հայր*** հասկացության հոգնակի ձևը՝ «հայրեր, նախնիներ, նախորդ սերունդներ» (1, 813) և *«հայրեր, պատվավոր, նշանավոր այրեր»* իմաստներով: Ըստ Ս. Մալխասյանցի՝ ***հայր***

հասկացության հոգնակին ենթադրում է *«նախնիք, պապեր, նախապապեր»* (10, 39) իմաստը, ինչպես՝ *Քեֆ էին անում ու ուրախանում մեր հսկա պապերն ու մեր* ***հայրերը***:

Ինչպես ժողովրդախոսակցական լեզվում, այնպես էլ աշխարհիկ բովանդակությամբ գեղարվեստական գործերի մեջ ***հայր*** հասկացությունը նշանակում է նաև *«ցեղի կամ ազգի նախահայր, վերակացու, տնօրէն, գլուխ, տէր, առաջնորդ»* (12, 32), ինչպես՝ *Մեր ազգի* ***հայրն*** *է Հայկ Նահապետը՝ ըստ ժողովրդական աւանդութեան, Մայրս, քոյրս միտս ընկան, որ* ***հայրերիս*** *սուրբ հողում ինձ կհիշեն ու լուռ կուլան աստղերի հետ հեզ* և այլն:

Հայր հասկացության հոգնակի թվով կիրառման ևս մեկ իմաստ են բերում ՆՀԲ-ի հեղինակները՝ վկայելով, որ ***հայր*** հասկացությունը ասորերենի նմանությամբ կիրառվում է նաև ծնող իմաստով «Ըստ ասորի ոճոյ՝ փոխանակ ասելոյ հայրն և մայրն, ծնօղք», ինչպես՝ *Կայեն ծնաւ անիծիւք, զոր զգեցեալ էին* ***հարք*** *նորա, Օր մի երբեմն ղի ոչ դիտեին* ***հարք*** *նոցա, ասէ Կայեն զՀաբել, եկ երթամք ի դաշտ, զԱդամ և զնոյ* ***զհարս*** *ամենայն երկրի* և այլն: Օրինակներից պարզ է դառնում, որ իմաստային այս կիրառությունը հատուկ է հոգնակի թվով արտահայտություններին:

Այս ենթաիմաստի ընդլայնմամբ ***հայր*** հասկացության կիրառությունը նշանակում է նաև սկեսրայր և մայր հասկացությունը՝ սկեսուր, ինչպես՝ «Արդ նոքա են քո ***հայր*** և մայր»:

Արշակունյաց Հայաստանում այս հասկացությամբ էր բնութագրվում «Արշակունի թագաւորների արքունի **ներքինապետը, մարդպետ»** (10, 40), ինչպես՝ *Արտաշեյանները նրանց* ***հայր*** *էին անվանում, որովհետև Մարդպետների աղիը նվաճել էր արքունիքի հանդեպ հայրական հոգատարություն տածելու մենաշնորհը* և այլն:

3. Կենդանանշություն

Անձնանիշ-կենդանանիշ փոխակերպման արդյունքում կենդանիների անունների վրա դրվելով՝ կազմում է նրանց արականը, ինչպես՝ ***Հայր*** *արագիլը կանգնել էր բույնի եզրին, հսկում էր նորածին ձագերին, իսկ մայր արագիլը գնացել էր ճահիճը կերակրվելու կամ կեր բերելու: Մի առավոտ* ***հայր*** *արագիլը իր ձագերի գլուխն անցած պտույտ գործեց գյուղի վրա և իջավ բակը: Օտարը, որ չէր սպասում այդպիսի հարձակման, պաշտպանվում էր կատաղորեն և կարողացավ դուրս պրծնել* ***հայր*** *առյուծի թաթերից, ետ ցատկել և թափ առնելով հարձակվել: -Ժամանակն է, շուտով պետք է հեռանանք այս տեղերից,-ասում էր* ***հայր*** *արագիլն իր ձագերին:* և այլն:

4. Իրանիշություն

Հայր հասկացությունը՝ որպես իրանիշ գոյական, *«առաջին յիմիք կարգի»* իմաստով գործածում է Եղիշեն *«Ամենայն տառից առաջին և* ***հայր*** *այբն է»* (12, 32) նախադասության մեջ՝ առարկայացում գեղարվեստական պատկերավորման միջոցով:

Հայր հասկացությով է բնութագրվում Ավետարանը, ինչպես՝ *«Քանզի **հայր** մեր զսուրբ աւետարանն գիտեմք, և մայր զառաքելական եկեղեցի կաթողիկէ»:*

«Սկիզբ» նշանակությամբ է. Աղայանը բերում է *«գիտության կամ տեխնիկայի որևէ ճյուղի հիմնադիր»* (1, 813) իմաստը, ինչպես՝ *Հերոդոտոսը հայր է կոչվում, Հայ պատմագրության հայրն է Մովսես Խորենացին*: Այս իմաստին Ս. Մալխասյանցը հավելում է *«սկզբնապատճառ, հեղինակ»* (10, 39) փոխաբերական իմաստը: Այս իմաստի դրսևորումները նույնպես բավականին տարածված են հայ հին և միջնադարյան գրականության էջերում, օրինակ՝ Գրիգոր Լուսավորչի *«Հաճախապատում»* երկում հանդիպում ենք *«Մահվան **հայրը** նախանձն է»* նախադասությանը, ինչպես՝ *«Ով է **հայր** մահու,- Նախանձ» (6, 147)*: ***Հայր*** հասկացությը վերոնշյալ նշանակությամբ է գործածվել նաև Հայոց հին հավատալիքներում *(9),* որտեղ ավանդազրույցները ներկայացվում են ընտանեկան հարաբերությունների ձևով: Այս դեպքում ***հայր*** հասկացությն անմիջականորեն առնչվում է ***մայր*** հասկացությին և բնության երևույթների անձնավորմամբ ներկայացնում ընտանեկան հարաբերությունները, ինչպես՝ *Երկինքն ու երկիրը ամուսիններ են: Երկինքը **հայր** է, երկիրը՝ մայր*: (9, 12): Երբեմն ***հայր*** հասկացությը դառնում է որոշիչ, ինչպես՝ *Ամպրոպի ժամանակ **հայր** երկինքն ու մայր երկիրը ծիրանի ծովի միջոցով միանում են իրար* (9, 21) և այլն:

Իրանիշ գոյականների վերագրվելիս ***հայր*** հասկացությը նշանակում է նաև նախանյութ, ինչպես՝ *«Պոդպատի կտոր, որի վրա բարձր քանդակված է տառը, և որից ճնշման միջոցով ստանում են մայրը և մատրիցան»* (10, 40):

Գրականություն

1. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, «Հայաստան» հրատարակչություն:
2. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, 1971, «Երևանի համալսարանի» հրատարակչություն:
3. Դեմիրճյան Դ., Երկեր, Երևան, 1983, «Լույս» հրատարակչություն:
4. Զոհրապ Գ. Երկեր, Երևան 1989, «Խորհրդային գրող» հրատարակչություն:
5. Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հ 2:
6. Լուսավորիչ Գ., Հաճախապատում:
7. Կողբացի Ե., Եղծ աղանդոց:
8. Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա, Երևան, 1979, «Երևանի

համալսարանի» հրատարակչություն
9. Հարությունյան Ս., Հայ հին վիպաշխարհը, «Արևիկ» հրատարակչություն, Երևան, 2004:
10. Մալխասեանց Ս., Հայերէն բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1944, Հայկական ՍՍՌ պետական հրատարակչութիւն:
11. Նար-Դոս, Պատմվածքներ, վիպակներ, Երևան, 1978, «Լույս» հրատարակչություն:
12. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Երևան, 1979, «Երևանի համալսարանի» հրատարակչություն:
13. Շիրազ Հ., Երկեր, հ. 4, Երևան 1986, «Սովետական գրող» հրատարակչություն:
14. Շիրվանզադե Ալ., հ 3, Երևան, 1987, «Սովետական գրող» հրատարակչություն:
15. Սևակ Պ., Անլռելի զանգակատուն, Երևան, 1990, «Խորհրդային գրող» հրատարակչություն:

Գեղարվեստական օրինակների մի մասը ներկայացված է՝ ըստ Արևելահայերենի ազգային կորպուսի http://eanc.net/EANC/search/?interface_language=am: Հասանելի է 20.10.2019:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնը: